ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2016 թվականի **թիվ 98** քաղ. Մոսկվա

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ 2017 թվականին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների նկատմամբ սակագնային քվոտայի ծավալներ սահմանելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 45-րդ հոդվածին, «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 2-րդ գլխին եւ Համաձայնագրի թիվ 1 հավելվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Սահմանել Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ 2017 թվականին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների նկատմամբ սակագնային քվոտայի (այսուհետ համապատասխանաբար՝ երկարահատիկ բրինձ, սակագնային քվոտա) ծավալները՝ Համաձայնագրին համապատասխան:

2. Սահմանել, որ սակագնային քվոտան կիրառվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող երկարահատիկ բրնձի նկատմամբ:

3. Անդամ պետություններին՝

իրականացնել սույն Որոշման 1-ին կետով սահմանված սակագնային քվոտայի ծավալների բաշխումն արտաքին առեւտրային գործունեության մասնակիցների միջեւ՝ իրենց օրենսդրությանը համապատասխան.

հանձնարարել գործադիր իշխանության լիազոր մարմիններին իրականացնել երկարահատիկ բրնձի ներմուծման լիցենզիայի տրամադրում:

4. Խնդրանքով դիմել անդամ պետություններին՝ տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն Որոշման 1-ին կետին համապատասխան սահմանված՝ սակագնային քվոտայի ծավալների՝ 2017 թվականի առաջին կիսամյակի արդյունքներով ընտրված մասի, ինչպես նաեւ մինչեւ 2017 թվականի վերջը՝ սակագնային քվոտայի սահմանված ծավալների ընտրանքի կանխատեսումների մասին.

անկախ սույն կետի առաջին պարբերության դրույթներից՝ անհրաժեշտության դեպքում, մինչեւ 2017 թվականի հունիսի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել առաջարկներ սույն Որոշման մեջ սակագնային քվոտայի սահմանված ծավալների ընտրված մասի՝ անդամ պետությունների միջեւ բաշխման մասով փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

5. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն ոչ շուտ, քան Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի օգոստոսի 30-ի
թիվ 98 որոշման

ԾԱՎԱԼՆԵՐԸ

Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում ծագող եւ 2017 թվականին Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածք ներմուծվող երկարահատիկ բրնձի առանձին տեսակների նկատմամբ սակագնային քվոտայի՝ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան

Ապրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Սակագնային քվոտայի ծավալները (տոննա)				
		Հայաստանի Հանրապետություն	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ղրղզստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
Ամբողջությամբ ծեծած, շոգեհարած երկարահատիկ բրինձ՝ լայնության նկատմամբ	1006 30 670 1	0,0	1 026,0	0,0	0,0	8 974.0

Ապրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Սակագնային քվոտայի ծավալները (տոննա)				
		Հայաստանի Հանրապետություն	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ղրղզստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
երկարության՝ 3 կամ ավելի հարաբերակցությամբ						
Ամբողջությամբ ծեծած այլ երկարահատիկ բրինձ՝ լայնության նկատմամբ երկարության՝ 3 կամ ավելի հարաբերակցությամբ	1006 30 980 1					